ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ

2023 թ. հունվարի 25-ի թիվ 4 նիստի

ԼՍԵՑԻՆ.- Դեկանի տեղակալ Ա. Մենեմշյանի հաղորդումը քննաշրջանի արդյունքների վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Ն. Է. Վարդանյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ն Մարտիրոսյանի հաղորդումը հեռակա ուսուցման ավարտական կուրսերի մագիստրոսական թեզերի նախապաշտպանության և պաշտպանության գործընթացը կազմակերպելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Դ. Հ. Ալավերդյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ն. Վարդանյանի զեկուցումը ռազմավարական պլանավորման մասին (հունվար-օգոստոս, 2023թ.):

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն.Ն. Մարտիրոսյան, Դ. Վ. Պետրոսյան, Մ. Մ. Կարապետյան:*
Ելույթ ունեցողները նշեցին՝ ռազմավարական պլանավորմամբ նախատեսված բոլոր գործողությունները իրատեսական են և իրագործելի: Կատարվել են նաև նախապատրաստական մի շարք աշխատանքներ, որոնցով պայմանավորված՝ կմշակվի յուրաքանչյուր գործողության իրականացման ժամանակացույց:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Հաղորդումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ.- Ն. Մարտիրոսյանի առաջարկը՝ 2022-23 ուստարվա երկրորդ կիսամյակում «Հարություն քահանա Շմավոնյան» և «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակների հավակնորդների անունները անփոփոխ թողնելու մասին:
Սեդա Առաքելյան («Հարություն քահանա Շմավոնյան»)
Տաթևիկ Ալիխանյան («Արտաշես Քալանթարյան»)

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Մ. Կուրեխյան:*
Ն. Մարտիրոսյանն առաջարկեց քվեարկությամբ հաստատել հավակնորդների թեկնածությունները: Անցկացվեց բաց քվեարկություն: Խորհրդի նիստին ներկա բոլոր անդամները «կողմ» քվեարկեցին:

ՈՐՈՇԵՑԻՆ.- 2022-23 ուստարվա երկրորդ կիսամյակում «Հարություն քահանա Շմավոնյան» և «Արտաշես Քալանթարյան» կրթաթոշակները հատկացնել Սեդա Առաքելյանին (4-րդ կուրս) և Տաթևիկ Ալիխանյանին (4-րդ կուրս):

ԼՍԵՑԻՆ.-Նոր մեդիայի և հաղորդակցության ամբիոնի վարիչ, կազմկոմիտեի համանախագահ Դ. Պետրոսյանի հաղորդումը «Լրագրողական կրթություն. խնդիրներ, հանձնառություններ, պրակտիկաներ» գիտաժողովի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Ն. Ն. Մարտիրոսյան, Դ. Հ. Ալավերդյան, Մ. Մ. Կարապետյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- ա) Գիտաժողովն անցկացնել 2023 թ. ապրիլի 21-ին, Գ. Անանյանի անվան Ինովացիոն մեդիակենտրոնում:
բ) Հայտերի լրացման վերջնաժամկետ սահմանել մարտի 21-ը:

ԼՍԵՑԻՆ.-Պրակտիկումի բարելավման ուղղությամբ ձեռնարկվելիք քայլերի և անհրաժեշտ գործողությունների մասին Ն. Մարտիրոսյանի առաջարկը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.- *Դ. Վ. Պետրոսյան, Ա. Ռ. Մենեմշյան, Մ. Կուրեխյան, Լ. Խաչատուրյան:*

ՈՐՈՇԵՑԻՆ.- Շարունակել աշխատանքը մենթորների ինստիտուտի ձևավորման և ֆակուլտետային ղեկավարների հետ նրանց հնարավոր փոխգործակցության ուղղությամբ:

ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ն. Ն. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Զ. Զ. ՍԱՐԳՍՅԱՆ